

ՄԻԽԱԹԱՐ ԳՆՈՇԻ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ԹԻԻ 1237 ԶԵՌԱԳԻՐԸ ԵՒ 225^ր ԿԱՆՈՆԸ

Մխիթար Գոշի Դատաստանագրքի մասին առաջին անգամ ղերական կերպով զբաղած է Հ. Ղ. Ալիշան, երբ 1848ի «Բազմավեպ»-ին մէջ¹, երեք յօդուածներով՝ ընթերցող հանրութեան կը ծանօթացնէր Դատաստանագրքը, զլրատող նպատակ ունենալով ապացուցանել՝ թէ Ս. Ղազարի թիւ 1237 ձեռագիրը, գրուած 1184ին, երբ հեղինակը տակաւին կենդանի էր, Մխիթար Գոշի իսկական ու հաւաքած ձեռագիրն էր, կատարուած Վախտանգ Սալեհոյ իշխանաց իշխանին համար:

28 տարեկան երիտասարդ բանասէրի մը համար՝ արհամարհելի չէ այս կարծիքը, մանաւանդ որ Ալիշան ստէպ ձեռնագիրն սրտին անսալով՝ մեծ եւ թանկագին տեսնել հայրենի յիշատակները: Այսօր այդ կարծիքը շատ խնդրական է եւ կարելի չէ վստահօրէն ապացուցանել:

Շատ աւելի ուշ, 1891ին, Փրոֆ. Միւլլերը զբաղած է Գոշի Դատաստանագրքով. բայց շատ հարեւանցի է Միւլլերի գրութիւնը եւ աւելի կը զբաղի Գոշի եւ Լեւհաճոյի դատաստանական հարցերով²:

Նոյն թուականին դարձեալ Ալիշան Հայապատումին³ մէջ կ'անդրադառնայ Մխիթար Գոշի Դատաստանագրքին վերայ, անոր նախաբանէն հատուածներ կը հրատարակէ, առանց մեր հնագոյն ձեռագրին մասին կրկին խօսելու:

Անշուշտ Գոշի Դատաստանագրքի ուսումնասիրութեան մէջ ամէնէն աւելի հեղինակաւոր անձը Վահան Վրդ. Բա-

տամեանն է: Հակառակ որ Վենետիկ այցելած է, սակայն կարծես թէ չէ տեսած մեր հնագոյն ձեռագիրը, կամ սխալած է՝ երբ դայն մագաղաթեայ կը համարի, մինչ Ալիշան վերոյիշեալ «Բազմավեպ»-ին մէջ որոշ կ'ըսէ՝ թէ բամպակեայ թուղթ է ձեռագիրը. այդպէս ալ է:

Իջմիածնի «Արարատ»⁴ ամսագիրը, 1900ին, պարզապէս հրատարակած է Մխիթարի դաւանաբանական մէկ գրութիւնը՝ կատարուած Զաքարէ սպասաւորի մէկ խնդրանքին վրայ. կը համարիմ թէ այդ գրութիւնը մաքուր առուակով հասած չէ մեզի. Կիրակոս պատմիչի շրջապատը զովեստները՝ իրը սրբակեաց անձի մը, չեն համեմատիր այն ատելութեան հոգիին՝ որ ունի յոյն, վրացի կամ հռոմէական եկեղեցիներուն հանդէպ, հակառակ որ սիրոյ եւ միութեան գեղեցիկ յորդորներ ալ կը պարունակէ:

1926ին⁵, Վիեննայի ուխտէն յարգելի Հ. Համադասպ Ոսկեան, դարձեալ ձեռք կ'առնէ Մխիթար Գոշը, եւ աւելի ընդարձակ ու ղերական ոճով կը պարզէ իր դաւաժանները, խօսելով Վենետիկան եւ Զմմառեան ձեռագիրներու վաւերականութեան մասին: Յարգելի հեղինակը սակայն չէ տեսած Վենետիկան ձեռագիրը եւ անօգուտ տարակոյտներ կը հանէ անոր հնութեան մասին. նոյն կասկածը յայտնած է իրմէ առաջ եւ Բատամեան:

Հ. Վարդան Հացունի⁶ զբաղելով Գոշի ձեռագիրներու հնութեամբ, ընդունեցաւ թէ Զմմառու օրինակը, գրուած Գրիգոր

Տղայ կաթողիկոսին համար, հնագոյնն է. «Եզրակացնեմք, կ'ըսէ յօդուածագիրը, Գոշի օրինագրին ծանօթ օրինակներէն հնագոյնն էր իւր քով եղածը, որ անյայտ է: Երկրորդն էր առ Գրիգոր կաթողիկոս ընծայածը, որ է ի Զմմառ »:

Հ. Հացունիի դատաւորումը ճիշտ չի գտնէր նախ Հ. Հ. Ոսկեան, որ Զմմառի օրինակը կը համարի 1240ին օրինակուած եւ Գոշի մահէն 27 տարի վերջը: Նոյն հարցը արծարծեց Հ. Մըսրէան⁷, կարծելով տեսնել Զմմառի օրինակին մէջ երկու տարբեր գրչութիւններ. առաջին մասը հնագոյն քան 1240 թուականը, եւ երկրորդ մաս մը գրուած 1240ին, ինչպէս յիշատակարանը կը վկայէ:

Հ. Մըսրէանի կարծիքն անընդունելի գտաւ Ս. Ղազարէն Հ. Հմայեակ Կէտիկեան⁸, որ փաստացիօրէն եւ ղեկով երկու հատուածներուն լուսանկարները, ցոյց տուաւ թէ միեւնոյն գրչին օրինակութիւնն է եւ առաջին մասը: Հետեւաբար ներկայիս որոշ փաստերով հաստատուած հնագոյն օրինակները պէտք է այսպէս դատաւորել:

- Ա. Վենետիկան օրինակ, գրուած Վախտանգ իշխանին համար, թիւ 1237, գրչութիւն 1184ին:
- Բ. Վենետիկան օրինակ, գրուած Մարկոս Եպիսկոպոսին համար, թիւ 1738, գրչութիւն 1238ին:
- Գ. Զմմառեան օրինակ, գրուած Ստեփանոս Եպիսկոպոսին համար, թիւ 8ա, գրչութիւն 1240ին:
- Դ. Իջմիածնի կամ Երեւանի մատենադարանի օրինակը, գրչ. 1295ին:

Մխիթար Գոշի հնագոյն օրինակը, ինչպէս Ալիշան ապացուցեց է, մէկ գրիչի

գործ է, նախաբանէն մինչեւ Աղուաններու նուիրապետութեան ցուցակն ու պատմութիւնը: Լուսանցքներու վրայ եղած փոքրիկ սրբագրութիւնները շատ հաւանաբար Մխիթար Գոշ ինքն ըրած է, Վախտանգ իշխանին նուիրելէ առաջ: Որոշ է թէ Գոշի անձնական ձեռագիրը չէ, ինչպէս Հ. Ոսկեան եւ Հացունի փաստերով ցոյց տուին. սակայն հեղինակին կենդանութեանը գրուած եւ անոր հսկողութեան տակ սրբագրուած, կրնանք ըսել թէ կարելի է իր ձեռագիրը համարել դէթ բարոյապէս: Բատամեան կը սխալի ըսելով՝ թէ այդ թուականին, այն է 1184ին, Մխիթար Գոշ տակաւին իր Դատաստանագրքը չէր գրած. նա փաստ չունի եւ մեր օրինակին յիշատակարանը շատ բացօրոշ է:

Դժբախտաբար այս հնագոյն օրինակին նախաբանէն երկու կամ երեք թերթ ինկած է, ինչպէս պակասաւոր է Աղուաններու համառօտ պատմութեան վերջաւորութիւնը, ուր պիտի խօսէր իր դարուն վրայ:

Նախաբանի ինկած թերթերու բովանդակութեան մէջ հաւանաբար Մխիթար կը խօսէր իր կիրարկելի գրութեան եւ դատաւորումի մասին եւ կը յորդորէր դատաւորները՝ արդար ըլլալ դատաստանի մէջ, ինչպէս մնացած հատուածը ցոյց կու տայ:

Այստեղ կու տանք նախաբանը եւ անոր շարունակութիւն Յիշատակարանը ամբողջութեամբ ըստ Ս. Ղազարու 1237 ձեռագրին:

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«...տարար մարմնոյ լինի դատաստանի մարմնաւորաց. եւ քանզի դարձեալ եղեալ մարմին, սպասաւորեսցուք դարձեալ մարմնոյ գրութեամբ դատաստանի: Ամենայն դատաւորը միշտ երկիցեն, ղերտելով զի դատաւորին առաջի կալոց են երկնաւորի, անվրէպ ղիտութեամբ աւերականաւ գրութեամբ դատաստանի ԲԺ. եւ

1. Բազմավեպ, 1848, էջ 40, 117, 154:
2. Հանդէս Ամսօրեայ, 1901, էջ 17:
3. Հայապատում, թիւ 298:

4. Արարատ, 1900, էջ 497, 562. 1901, էջ 55, 121:
5. Հանդէս Ամս. 1926, էջ 548. 1926, էջ 26:
6. Բազմավեպ, 1942, էջ 4:

7. Յ. Մըսրէան, Տեղեկագիր հայագիտութեան, Պէյրուս, 1947-1948, հատոր 27, պրակ 10 (Փրանսերէն):
8. Բազմավեպ, 1952, էջ 152:

զի դատեալքն նմանապէս դարձուրեցին. զի թէ զստութիւն արդարացուցանել առաջ(ի առնեմ) ոչ կարեն, թէպէտ եւ բազում անգամ պատուեն զդատաւորս, զի՞նչ անդ զործեսցեն որ զխորս տեսանէ, որում առաջի պատրանաւք արդարանալ ոչ կարեն. յայտոսիկ ԲԺ. զլուխս պարունակեալ եղեւ պատճառ զրոցս դատաստանի: Զի եւ ԲԺս բաղկանայ յերկուց վեցեկաց. եւ վեցեակն առաջին կատարեալ թիւ է իբրու թէ որպէս. առաջին զի երեւնի ի կոճատէ եւ երկուսն ի դարէ բաղկանայ. եւ ամենայն թիւ դար է եւ կոճատ: Երկրորդ, զի քանակ է արարչութեանն. երրորդ, զի չափ է շարժման մարմնոյ. չորրորդ, զի թիւ է ներդրածութեան մարմնոյ. հինգերորդ, զի ծնանի զայլ երկարսն. վեցերորդ, զի ի կողմանց իւրոց յանդի. եւ կրկնելով ծնանի զերկոտասան թիւն, եւ երկոտասան ի կողմանց իւրոց զուգեալ ծնանի զվեցստասան, զերկուս կատարեալս զտասն եւ զվեց զխորհուրդ ԲԺ առաքելոցն դատաւորաց աշխարհի, զի զայլս ծնան դատաւորս յեկեղեցի: Եւ զի դար ունի վեցեակն եւ կոճատ, որ է ներդրածական եւ դրական, եւ զի դատաւորաց ներդրածել եւ կրել դատելոց: Ի սոյն թիւ դատաւորին եղեւ զալուստ երկնաւորի, զոր եւ ի վեցից վեցաց փրկեաց զարդարն եւ զնովին թուով զտանձողսն առաքեաց, զի եղիցի տապարաւք: Այսորիկ առ այս շատ լիցի. զի ոչ զընութիւն թուոյ քննել առաջի արկաք. այլ եթէ ոչ վայրապար եղեւ յԲԺ զլուխ աւարտել զրոցս դատաստանի. իսկ եթէ յուսմէ յորդորեալ եկաք ի դրել:

Ի բազում ժամանակաց հետէ տարակուսեալ յաղագս սորին լինէի. խոցոտելովն ի նախատելն զմեզ մերոց եւ աւտարաց ազգաց. սակայն վստահել ի սոյն ոչ իշխէի, գիտելով զանձին տկարութիւն, յաղագս որոյ զվարանսն ի զրուցատրեւն մեր, լուսւ եղբայրն Պաւլոս, սիրելի աշակերտն աստուածային զրոց եւ խոստովան եղեւ փափազող այնմիկ լինել առաւել: Եւ սկսաւ շարժել զմեզ հարկեցուցիչ

բանիւք. նա եւ ոչ այնու ձեռնամուխ լինել կամեցաք. այլ խորհէի զայլս աղաչել զաւրաւորս, որք կարող էին զհարկ վճարել բանին, զի բազումք իսկ էին: Բայց զի զանընդունելութիւն ազգիս գիտէի պատճառել եւ այնու ոչ կամեցայ զոր առայս աղերսել, լռեցի ապա այնուհետեւ եւ ես: Եւ զարմացեալ յաղագս այսորիկ լինէի եթէ զիմօրդ յառաջնոց հարանցն մերոց ոչ կարգեցաւ. եւ զնոյն գիտացեալ պատճառ զի եւ ոչ յառաքելոց Տեառն տուաւ, եւ կամ զի ոչ որ հրաւիրեաց եւ անձամբ ոչ ետուն զարհուրեալք ի պարտաւելտաց եւ կամ ի հալածանաց եւ ի խռովութեանց անպարտապատահեցան. եւ կամ ընդ տէրութեամբ անկեալ այլոց ազգաց նոցունց վարեցան դատաստանաւք: Եւ թէպէտ ամենայն պատահեաց ըստ ժամանակիս եւ ըստ նոյն պատճառ որպէս յաւուրս հարցն մերոց ոչ աւանդել զբով դատաստան, բայց ի միոյն, զի եւ ոչ յառաքելոց անդի տուաւ, բայց սակայն հարկաւոր եղեւ զրել որպէս վերագոյն ցուցաւ եւ սկիզբն առնել ահիւ Տեառն այսմ իրողութեան. այսպէս եղեւ:

Հանդիպեցաք առաջի տեսուն Ստեփաննոսի Աղուանից կաթողիկոսի. եւ նոյն իրի վերստին յիշատակ եղեւ, եւ նա յորդորեալ փութացոյց զմեզ ասելով եթէ. Շնորհ յոյժ ունիմ իրիդ կատարման: Առաջի եւ մեր զմերս եղաք անկարութիւն, որպէս վերագոյնն. սակայն ընդ յերկրորդեւն եւ ի քաջալերելն խորհուրդ իմն ի մեզ եղեւ եթէ արժանէ հոգեւոր հրամանի անսալ, զի թէ ի Տեառնէ իցէ՝ բարիք յանդեալ կատարեսցի իմաստախորհութեամբ. զի թերեւս ի նմանէ լինի առաջատուութիւնս, ապա թէ ոչ՝ պատճառ լիցի կատարելոց ոմանց շարժիլ ի սոյն, զի եւ ոչ զործ ամենայն եւ արուեստ ի միով սկսողէ աւարտեալ կատարեցաւ ի սկզբանէ, այլ իրագագ զի մասնաւոր գտեալքն ժողովեալ գոյացուցին ընդ զարուեստն. զի ըստ առակի ոստայնանկաց. նա եւ պատշաճ ինձ վարկայ ընդոստնուլ սովաւ, եթէ յատեանս մտանե-

լոց եւ յանկաշառ եւ յանդուրելի, ըստ որում ձեռամբ իսկ դժեմ զապագայիցն նշանակ:

Եւ արդ մի՛ ոք պարտաւանս դի(ցէ) ասացելոցս, զի եթէ տխմար որ իցէ՝ ուսցի, եւ թէ ամենակատար իմաստուն՝ զթերին լցցէ. երկաքանչիւրոցն պատրաստ եմք սիրով ընդառաջել:

Եջ 94 - Յիշատակարան սակաւութ -

«Եւ զի թէպէտ բնաւորական է ամենեցուն լաւին ցանկալ եւ անսխալ յիրս յամենայն լինել, սակայն ոչ է հնարաւոր. ի լինելութեան եւ յապականութեան է բնութիւնս, եւ այդ յոյժ քաջարանից որչափ եւ մեզ իցէ, որ ամենայն ինչ զործ սխալեան եղեւ եւ զերթէ յսկզբանէ. վասն որոյ զամենեւեան զինի մեր եկեալսն զհարս եւ զեղբարսդ, ի զանազան ժամանակս աղաչեմ մաղթանաւք զյոյրով եւ զոչ սակաւ սխալանսն ուղղեալք պատահալք ընթերցման տառիս եւ զիրաւացի թերին լցլիք, որպէս վերագոյն ծանուցաւ: Զի հասարակ եւ ի վեր քան զհասարակ սխալանացն ունիմ զպատճառ, նախ զբիծս անհիմ (անձին?), զոր զներդրածութիւն խափանէ զհոգեւոյն եւ ապա զսխալ մարմնոյն, եւ զի յայտ անվարժութիւն համարեն է սեռի եւ յատկի. եւ զարձեալ անպարապութիւն զի ընդ ստեամբ արտաթետիւ զմանկունս ունէի բանի եւ զպանդխտութիւն եւ զանտեղութիւն զըջութեան եւ զհակառակութիւն ներքնոց եւ արտաքնոց, զպայութեան տրկարութեան եւ զմարտս գիւաց, եւ զպակասութիւն զործեաց զծագրութեան եւ զաղքատութիւն մատենից որոց զնիւթս հաւաքել ի գէտ էր բանից. ապա եթէ ընտանի ազգիս բարեք սխալանացն լինիք պարտաւել եւ ոչ ուղղիչ՝ գիտելով զործ հայկազնեացս զայդոսիկ, միանգամայն զչափ անձինն, անմեղադիր ձեզ յայդոսիկ լինիմք: Ապա եթէ սիրով մերոց պատահիք բանից եւ խնամիչ կամաւք զթերին լնուցիք, ի Տեառնէ զհաստուցումն առջիք բարեաց, եւ զգանձս

բանից ձերովք երկամբք յեկեղեցիս ամբարեսլիք յիշատակ բարեաց մնալ ձեզ ի նմա:

Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութեան եղեւ ի թուականութեան Հայոց ՈԼԳ. եւ (յուսանցի մէջ աւելցուած իսկ Հոռոմին ՆԵ.) եւ չըջանին երթալոյ ի բաց ձԱ. որ կոչի փոքր, յաման անիշխանութեան թագաւորութեան մերոյ ի վաղնջոց ի ժամանակի մնալելոց - (մընացելոց) սակաւ իշխանացս ի կողմանս իւաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանա, որդւոյ Վախտանկա կրանաւորեցելոյ, եւ որդւոյ նորա Վախտանգա ի զղեկին որ անուանեալ կոչի Հաթերֆ, զիւսաւորի այլոց իշխանացն:

Եւ կողմանցն Կիւղիկեա մեծի իշխանին Ռուբենի. ի յամի յորում մեռաւ յաղթող թագաւորն Վրաց Գեարգէ: Ի հայրապետութեան տեսուն Գրիգորի Հայոց մեծաց, եւ ի գիտապետութեան տեսուն Ստեփաննոսի տանս Աղուանից. յաշխարհիս Առանա, ի նահանգիս որ կոչի մայրաքաղաքին Գանձակայ, յանապատին եւ յեղբայրանոցս անդ եղեալ Դասնոյ: Սկզբնաւորեալ ի լեռնակողմ մենաստանին կոչելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց. ձեռնատուութեամբ հաւր Յովսէփայ եւ եղբար Պաւլոսի յորդորմամբ յառաջարկութիւնս:

Բայց զծագրութիւն յիշատակիս ի նախագրութիւն զրոցս դատաստանի եղեւ, զի կատարած սորա ի ձեռն մեր մի անգամ ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն: Եւ արդ որքան է կար՝ ի զործ անգանիմք, հիւսնել զկնի զիրս դատաստանի, ընդ որս եւ զայս մաղթեմք. եթէ պատահի եւ հաճոյ ոմանց թուի յաւրինակէ աստի փոխել զիրս դատաստանի, ընդ նմին փոխեսլիք եւ զյիշատակս զայսորիկ, յիշատակել սոքաւք զմեզ, որով եւ դուք համարէն յիշեալ լինիք ի Քրիստոս Յիսուս Տէրն մեր, որում փառք յաւիտեանս: ամէն: Կատարեցաւ նախադրութիւն գրոցս դատաստանի ի նաւս ԺԱ. »:

Նախարարներ, եւ 94-100 էջ երկարող յիշատակարանը մէկ ամբողջութիւն կը կազմեն. հեղինակը կիսած է, վախճալով չկարենալ դուրս հանել Դատաստանադերքը, իբր իր ոյժերէն վեր գործ մը. սակայն առաջին յաջողութիւններէն քաջալերուած, կցեր է յիշատակարանը՝ դա՛ն շարունակելով 94 էջին վրայ:

Պէտք է ընդունիլ թէ մեր թիւ 1237 ձեռագրին նախարանը պաշտօնական էր, ընդհանուր գործին վերաբերեալ, երբ կը ներկայացնէ իր ծրագիրը եւ յորդոր կու տայ դատաւորներուն արդար դատաստան կարել, որովհետեւ վերն իրենց ալ անկաշառ դատաւոր մը կայ: Իսկ Ազուաններու եւ Հայոց կաթողիկոսին յատկապէս նուիրուած օրինակները յատուկ ընծալականներ ունէին, ինչպէս Զմամուի ձեռագրին օրինակութիւնը առաջ կը բերէ: Անշուշտ Մխիթար Գոշ իր անձնական օրինակն ունէր, որուն վրայէն օրինակել տուած է, զանազան պաշտօնական անձերու նուիրելու համար:

Մխիթար իր երկու աշխատակիցներուն անունները կու տայ մեր ձեռագրի 94 էջի յիշատակարանին մէջ. Եղբայր Պաղոս, իբր բարոյապէս եւ յորդորներով քաջալերող, եւ Հայր Յովսէփ. այս երկրորդին մասին կ'ըսուի Զեռնատուութեամբ հալը Յովսէփայ. ի՞նչ իմաստով արգեօք. այս Հայր Յովսէփը միթէ թո՞ւղթ, գրի՞չ, մեկո՞ն միայն հայթայթած է. այդ նիւթերը հրապարակի վրայ վաճառողներ կային. ինչո՞ւ չընդունիլ որ Հայր Յովսէփն է որ մայր բնագրին վրայէն օրինակած է՝ պաշտօնական անձերու նուիրելու համար, զէթ մեր օրինակը. չեմ կարծեր թէ բովանդակութեան խմբագրութեան մէջ աշխատակցած ըլլայ. տարբեր ոճի գրիչ չկայ:

Թէ Ս. Ղազարի թիւ 1237 ձեռագիրը ուղղակի վախթանդ իշխանաց իշխանին համար օրինակուած է, ասոր տարակոյս չէ կարելի հանել, յիշատակարանները շատ պարզ եւ որոշ կը վկայեն. կենդանի, ժամանակակից, իշխող վախթանդի մը,

ոչ ծնելիք մէկու մը եւ ոչ մեռած վախթանդի մը:

Տէր Աստուած վայելի տացէ աստուածաւէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին վախտանկայ, որդւոյ Հասանայ ի կամս իւր զգիրքս դատաստանի, անխալ ուղղութեամբ վարել զպատուիրանս սորին:

Վերջին հինգ բառերը որոշ անձի մը, վախտանդ իշխանին համար են, որպէսզի անխալ ուղղութեամբ կատարէ իր դատերը:

Էջ 311ի վրայ վախտանդի անուան յիշատակութիւնը պարզապէս բարեպաշտ մարթողական մ'է. Քրիստոս Աստուած գո հայրենի ժառանգութիւնդ տացես վայելի վԱ.ԽՏԱՆԳԱ իշխանաց իշխանի. ամէն:

Աւելի բացայայտ եւ ընդարձակ ընծալական մը կը գտնենք 591 էջին վրայ, Դատաստանագրքի վերջաւորութեան, երկաթագիր հսկայ տառերով, պաշտօնական ու քանդակիչ մեծագոր իշխանաց իշխանի մը արժանի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՅՈՐԺԱՄ ԳԱՍ ՆՈՐՈԳԵԼ ԶԵՐԿԻՐ, ՆՈՐՈԳԵԱ ՀՈԳԻՈՎ ԵՒ ՄԱՐՄՆՈՎ ԶԱՍՏՈՒՍԺԱՍԷՐ ԻՇԽԱՆ ԻՇԽԱՆԱՅ ԶՎԱԽՏԱՆԳ ԵՒ ԶԱՄՈՒՄԻՆ ԻՒՐ ԶԱՐԶՈՒ ԽԱԹՈՒՆՆ Ի ԿԵԱՆՍ ԱՆՄԱՀՍ, ԵՒ Ի ՆԵՐԿԱՅԻՍ ԱՌԱՆՅ ՓՈՐԶԱՆԱՅ ՊԱՀԵՍՅԵՍ ԶԱԽԱՄԻՔ ՀԱՆԴԵՐՁ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԸՆՏԱՆԵՒՔ. ԵՒ ԲԱԶՈՒՄ ԵՒ ԱՌԱՏ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՔՈ ՈՂՈՐՄԵԱՅ ԵՒՍ ՆՆՁԵՅԵԼՈՅ ՆՈՅԱՅ. ԱՄԷՆ: Եւ տառապեալ գրչիս ողորմեա Քրիստոս Աստուած. ամէն:

Նախախնամական եղած է որ դրած է եւ ի ներկայիս առանց փորձանաց պահեստանիւ. ապա թէ ոչ՝ բանասէր մը կըրնար չփոթիլ եւ կարծել թէ մեռած վախտանդի մը եւ Զարգու խաթունի մը յիշատակութիւնը կ'ընէ:

Ուրիշ նախախնամական կէտ մըն ալ այն է, որ հակառակ գրքին ամէնէն վեր-

ջը դրուած ըլլալուն, ուղղակի գրչին կը պատկանի, որովհետեւ գիրքը այս ընծալականով չի փակուիր, այլ նոյն գրչէն ելած վերջին յիշատակարանով մը, ապա թէ ոչ ոմանք պիտի կասկածէին յիշատակարանի հարադատութեան վրայ:

Մխիթար Գոշի վերջին յիշատակարանը ոչ միայն դադարումն է իր գործին, այսինքն փակումը, այլ հետաքրքրական է Ազուաններու հայրապետներու շարքին եւ պատմութեան համառոտ գրութեամբ. դժբախտաբար վերջերը պակասաւոր է, եւ ամէնէն թանկագին մասը ինկած է. ահա այդ յիշատակարանը:

Էջ 593

« Փառք Փրկչին մերոյ Յիսուսի ընդ նմին Հաւր եւ Հոգւոյն, որ ետ զգաղարումն աստանաւր տալ զրոյս դատաստանի. զի թէ եւ յառաջագոյն ասացաք, գրելով զտակաւ յիշատակարանն եթէ աւարտումն սորա ոչ է. սակայն այժմ մեք հանդուցանել կամեցաք, զրելով ըստ կարի, ոչ խափանել զայոց որք կամին գրել եւ յաւելուլ: Եւ թէպէտ յամի յորում սկըսաք, գրեցաք զեղեալ չափս դատաստանի, սակայն յաղագս հալածանաց որ եւ հաս մեզ ընտանի եւ ոչ (աւ)տար, յաղաղեաց զրել զյիշատակա զայսոսիկ. բայց համարեցաք եւ զայս եւս հարկաւոր լինել զի զար կարգի հայրապետացն դիցուք զԱզուանից զի եւ յայնոսիկ յամէն... զսոսա որ այժմուն են արարեցուք: Մի ըստ այդմ (գ)ուսցուք պատճառի. երկրորդ զի եթէ ոք յաւթարեցի զրել պատմութիւն զկնի զրեցելոյն պատմութեան Մովսէսի Դատարանեցուցն, որ զրովանդակ պատմէ զտանս Ազուանից, զիւրին լիցի յայժմանէ զար հայրապետացն առնուլ, զի ոչ զամենեցուն անուն ի նորայն զոցէ պատմութեան, բայց զայնոսիկ զորոց գրեաց, զի յայն ժամանակէ մինչեւ զայժմ ոչ ոք գրեաց. եթէ պատա-

հի ոք յոյժ հարկաւոր է, եւ արդ դիցուք զկարգն »:

Այս յիշատակարանի առաջին մասը, մինչեւ յապաղեաց գրել զյիշատակա գայտսիկ, կը գտնուի նաեւ Զմամու օրինակին մէջ. սակայն այդ բառերէն վերջ՝ իրարմէ կը դատուին, մերինը ակնարկելով Ազուաններու հայրապետներու շարքին, իսկ Զմամու օրինակը կ'ուղղէ իր խօսքերը Գրիգոր Տղայ կաթողիկոսին, որուն համար օրինակուած էր բնագիրը:

Կը համարիմ թէ մեր 1237 թիւ հնագոյն օրինակին կաշկապտ կողքն ալ գրչութեան ժամանակակից է, անշուշտ արծաթապատ եղած էր, արժանի՝ իշխանի մը ձեռքերուն, եւ արդէն դուրս ցցուած դամբըրը այդ ցոյց կու տան. ներկայիս կաշկապտ է եւ բաւական մաշած, եւ երկու երեսներուն վրայ ունի կաշիին վրայ զծագրական զարդեր:

Երկրորդ հնագոյն ձեռագիրը Մխիթար Գոշի Դատաստանագրքին Ս. Ղազարի ձեռագրատան 1738 թիւը կը կրէ: Կաշկապտ, մաքուր պահուած, 16,50×12,50 մեծութեամբ, 297 էջերով: 1910ին մաս կը կազմէ Մխիթարեան հաւաքածոյին, Կարնեցի Յովսէփ վարդապետ Մելքիսեղեանի նուիրատուութեամբ: Սակայն այս ձեռագրին միակ յիշատակարանը արգէն ծանօթ էր Ալիշանին, որ հատուածեալ գետեղած է իր Հայապատումին մէջ, 458 էջին վրայ:

Յիշատակարանը ծանօթ է նաեւ Հ. Յ. Մըսրէանին, որ զայն Փրանսերէնի թարգմանած դրած է իր հայադիտական պարբերաթերթին մէջ⁹, ուսկից առած է Գարեգին Յովսէփեան¹⁰:

Մանրատու, բոլորգիր, բաւական վարժ գրիչի մը գործը. Բարսեղ կը կոչուի օրինակողը:

1738 թիւ ձեռագիրը մեծ տարբերութիւն մը չունի մեր հնագոյն ձեռագրէն, ան-

9. Հ. Յ. Մըսրէան, Հայագիտական պարբերաթերթ. տետր. Ա. 1947, էջ 223-4 եւ 247-248 (Փրանսերէն):

10. Գ. Կաթ. Յովսէփեան, Յիշատակարանի ձեռագրաց, Ա. հատոր, էջ 930, Անթիլիսոս, 1951:

